« ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/4»

<< 10 >> օգոստոսի 2020թ.

ք. Մեղրի

« Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն » ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Անդրանիկ Գրիգորյանը մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների>>** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայության անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 206000 (երկու հարյուր վեց հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Դրում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորմնն դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է __8__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	Ա/Ձ Անդրանիկ Գրիգորյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 24/7
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ"ՓԲԸ Մեղրու մ/ճ	Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 16099003354200	Հ/Հ 1150009796626695
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 78678132
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru	Էլ. հասցեն՝ meghrihhg@gmail.com
Հեռ. 0286-60685	Հեռ. 077202175
Տնօրեն՝ / Լ.Վարդանյան	Ա/Ձ Ա.Գրիգորյան
Կ.Տ.	Կ.Տ

Digitally signed by VARDANYAN SYUZANNA
6702970080
Date: 2020.08.10 16:40:00 GMT+04:00

Հավելվ
<<_10_>> օգոստոսի 2020թ. կնքվ
N«ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/4» ծածկագրով գնման պայմանագր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը
1	50111130	ստուպիցի պաչեմնիկի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	կոմպլ	1	5000	5000
2	50111130	կարճ շառնիրի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	հատ	1	5000	5000
3	50111130	երկար շառնիրի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	հատ	1	5000	5000
4	50111130	ստաբիլիզատորի ռեզինների փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	կոմպլ	1	6000	6000
5	50111130	ռեսորի ռեզինների փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	կոմպլ	1	14000	14000
6	50111130	ամորտիզատորի ռեզինների փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	կոմպլ	1	4000	4000
7	50111130	շկոռնի պաչեմնիկների փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	կոմպլ	1	8000	8000
8	50111130	կոնուսի գլխավոր բաչոնկի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 39623	հատ	1	3000	3000
9	50111130	շարժիչի յուղի և ֆիլտրի փոխում	ՈՒԱԶ 39623	հատ	2	1000	2000
10	50111130	առջևի դիմապակի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	3000	3000
11	50111130	շիտոկ պրիբորի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	2000	2000
12	50111130	առջևի նստարաներ աջ+ձախ փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	զույգ	1	5000	5000
13	50111130	առջևի լուսարձակներ /ֆառեր/ փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	զույգ	1	2000	2000

14	50111130	դինամոյի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	2000	
15	50111130	էլ.տրամվյորի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	2000	200
16	50111130	էլ.տրամվյորի պռովուդկայի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	1000	1000
17	50111130	կրեստավինայի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	3000	6000
18	50111130	ստաբիլիզատորի ռեզինների փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	2000	2000
19	50111130	դռների ապակիների պաղյոմնիկ աջ+ձախ փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	զույգ	2	2000	4000
20	50111130	փեչի կռանիկի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	3000	3000
21	50111130	փեչի մատորչիկ	ՎԱԶ 21213	հատ	1	3000	3000
22	50111130	մատոռչիկով չոտկերի ջրի բաչոկ փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	500	500
23	50111130	էլ.կոճի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	1000	1000
24	50111130	ռուլավոյ կալոնկայի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	5000	5000
25	50111130	առջևի անիվի արգելակման տարելկայի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	3000	6000
26	50111130	առջևի արգելակման կոճղակի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	1000	1000
27	50111130	առանց զսպանակի հետևի արգելակման կոճղակի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	4000	4000
28	50111130	բենզինի շլանգի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	3	500	1500
29	50111130	ժիդկոստի շլանգ փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	500	1000
30	50111130	ստուպիցի պոդշիպնիկի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	զույգ	4	4000	16000
31	50111130	շարժիչի յուղի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	5	1000	5000
32	50111130	դիսկի, պլիտա վժիմնոյ պոդշիպնիկի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	15000	30000
33	50111130	հետեվի դիֆեռի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	7000	7000

34	50111130	հետևի ամորտիզատորի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	1000	1
35	50111130	դեմի ամորտիզատորի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	1000	200
36	50111130	6 ծականի ռեզինի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	7000	14000
37	50111130	շառավոյների փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	1500	3000
38	50111130	ռազվալի տուլկիների փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	15000	15000
39	50111130	պոդշիպնիկ մայատնիկի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	1	2000	2000
40	50111130	Շարժիչի էլեկտրակայծային մոմերի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	4	250	1000
41	50111130	ռուլավոյ տյագաների փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	կոմպլ	1	5000	5000
42	50111130	դեմի անիվի տորմուզի տարելկայի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	2	2000	4000
43	50111130	դեմի անիվի տորմուզի սուպորտի փոխում տեղադրում	ՎԱԶ 21213	հատ	4	2000	8000
44	50111130	կարբյուրատորի վերանորոգում	ՎԱԶ 21213	հատ	2	7000	14000
45	50111130	դեմի մոստի վերանորոգում	ՎԱԶ 21213	հատ	2	25000	50000
46	50111130	դեմի մոստի ռեգիրովկա	ՎԱԶ 21213	հատ	2	4000	8000
47	50111130	հետեվի մոստի վերանորոգում	ՎԱԶ 21213	հատ	2	23000	46000
48	50111130	հետեվի մոստի ռեգիրովկա	ՎԱԶ 21213	հատ	2	3000	6000
49	50111130	դինամոյի վերանորոգում	ՎԱԶ 21213	հատ	2	8000	16000
50	50111130	ստարտերի վերանորոգում	ՎԱԶ 21213	հատ	2	8000	16000
51	50111130	շառնիրների փոխում	ՎԱԶ 21213	զույգ	2	8000	16000
52	50111130	պոլոսի փոխում	ՎԱԶ 21213	հատ	2	2000	4000
53	50111130	շտանգի ռեզինների փոխում	ՎԱԶ 21213	կոմպլ	2	5000	10000
54	50111130	ֆառերի տումբլեռի փոխում տեղադրում	ՈԻԱԶ 3962	հատ	1	2000	2000

55	50111130	մարգատելի գիթառի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 3962	հատ	1	2500	2
56	50111130	ռուչնոյ ռուչնիկի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 3962	կոմպլ	1	2000	200
57	50111130	Շարժիչի յուղի և ֆիլտրի փոխում տեղադրում	ՈՒԱԶ 3962	հատ	2	1000	2000
58	50111130	համակարգչային դիագնոստիկա	ՈՒԱԶ 39623 -ի (2018 թ)	հատ	2	5000	10000
59	50111130	համակարգչային դիագնոստիկա	ՋԻՆԲԵՅ	հատ	6	10000	60000
Ընդամենը՝ չորս հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր դրամ							484500

Ծառայությունը նախատեսվում է գնել 2020 թ-ի ընթացքում: Յուրաքանչյուր ծառայության նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից:

Ծառայությունը մատուցվում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 24-48 ժամվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ"ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / Լ.Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Անդրանիկ Գրիգորյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 24/7
Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 1150009796626695
ՀՎՀՀ 78678132
Էլ. հասցեն՝ meghrihhg@gmail.com
Հեռ. 077202175

Ա/Ձ Ա.Գրիգորյան

Digitally signed by VARDANYAN SYUZANNA
6702970080
Date: 2020.08.10 16:41:40 GMT+04:00

Հավելվ
<<_10_>> օգոստոսի 2020թ. կնք
N«ՄՏԲԿ-ՄԱ-ԾՁԲ-20/4» ծածկագրով գնման պայման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դր

Ծառայության Հ/հ	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստամիսների, այդթվում				
	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1;2;3;4;5;6;7;8;9;10;11;12;13;14;15;16;17;18;19;20;21;22;23;24;25;26;27;28;29;30;31;32;33;34;35;36;40;41;42;43;44;45;46;47;48;49;50;51;52;53;54;55;56;57;58;59	40	60	80	100	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կրգով:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ"ՓԲԸ Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / Լ.Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Անդրանիկ Գրիգորյան
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Ագարակ,Չարենցի 24/7
Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ագարակ մ/ճ
Հ/Հ 1150009796626695
ՀՎՀՀ 78678132
Էլ. հասցեն՝ meghrihhg@gmail.com
Հեռ. 077202175

Ա/Ձ Ա.Գրիգորյան

Կ.Տ.

Digitally signed by VARDANYAN SYUZANNA
6702970080
Date: 2020.08.10 16:42:51 GMT+04:00